

Խան: Ուտելեաց վերջին սպասն էր, լծորդ պրս. Խան բառին՝ որ է սեղան (Գ. Գպ.), եւ հոմանիշ յն. *χαλκον* (Ծննդ. Խ, 16. Եւք. ԻԹ, 3, եւն), որ կը նշանակէր պրտուեղէն սակառ մը՝ բոլորշի, լայն ու ծանծաղ (Գար. Ա, 892), եւ որ նշմարելի է եզրպտական քանդակաց մէջ ալ, աւելի փոքր ու խոր (Վիգ. Բ, 1147): Ս. Գըրոց մէջ կը գործածուի խմորեղինաց: Մեր յատուկ կոչումէն եւս հետեւցնելու չենք՝ թէ աղանդերը սոյն անօթով ի սեղան կը բերուէր՝ գէթ հին ժամանակ, որուն յաջորդած լինի սկուտղը (աստ, 65):

Բ. — Ըմպելեաց սպասներն էին:

Նոռագ: Ծանօթ ոսկեղարու լեզուին մէջ, եւ իբր բնիկ հայեցի՝ գործածուած յատկապէս ինքնագիր մատենագրաց ու մերթքիչ մ'ազատ թարգմանութեանց մէջ եւս<sup>1</sup>, հաւանօրէն հոմանիշ էր միջին եւ նոր հայերէն «գաւաթին», եւ սեպհական ըմպելեաց, եւ յատկապէս գինույ: Արգամ ու Սմբատ իրաւունք ունէին «ոսկեղինօք ըմպել նոռագօք» (Խոր. 124), եւ Սմբատ Բագրատունի նուիրեց Յուսիփայ գեղեցիկ «նոռագս» (Յհ. կթղ. 250): Մեք այս անօթին գոր-

1. Մակ. Ա, ԺԱ, 58. Բ, Գ, 39. ուր յն. է *χρυσωμα*, այս ինքն որ եւ է «ոսկեղէն» սպաս: